

Ամեն օր կհրատարակուի : — Հասար 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուղղորդ
 մէկ արժաթ Մէճիա պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 զրշ, գար-
 ձեալ 100 թուոց համար, թղթաապրութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման
 առջը 40 փարայ է մէկ անդամի համար : — Լրագրիս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ
 եւ է գրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ
 վարի գրանը կից Նոր Գրատունը :

Ա Ձ Պ Ա Յ Ի Ն

Երէկ առիթ ունեցանք, ժամու
 մը չափ իւսկիւտարի Ս. Խաչ Թաղի
 մանչ-աղայոց վարժարանին մէջ գըտ-
 նուելու : Բարեբաղդաբար հոն տե-
 սանք Թաղին քարոզիչ արժ. Մարկոս
 վարդապետն, մեծ պատուելի Տէ-
 րոյեանց եւ նորընտիր Հոգաբարձու-
 թեան մեծ անդամներէն մէկ քա-
 նին : Համառօտ քննութիւն մ'եղաւ
 հայերէն տաճկերէն ու գաղղիարէն
 լեզուաց համար : Արժ. քարոզիչն ու
 մեծ պատուելին մեր հետ գոհու-
 թիւն մատուցին եւ մեծ յոյս յայտնեցին
 ապագային համար : — Ծնօրհակալու-
 թեամբ կյիշատակեմք Հոգաբարձու-
 թեան եռանդը : Ուսումնասիրաբար
 կ'ընան վարժարանը յառաջագէմ
 ընթացքի մէջ դնելու : Նոր եղած
 կարգադրութիւններն ու շանքերը ան-
 տարակոյս կ'ընեն զմեզ թէ՛ քիչ ատե-
 նէն պիտի կրնամք այս վարժարանը
 իբրև օրինակ ներկայացունել ուրիշ-
 ներուն :

Հետևաբար՝ պարտք կ'համարիմք
 մեզ Սէլամիյէի պատուարժան աղ-
 դայնոց աշակցութիւնը եւ համակրու-

թիւնը խնդրել Հոգաբարձութեան
 համար : Մնուրանալի է որ առանց ըս-
 տակի անհնար է գործ տեսնել : Ստոյգ
 է որ Հոգաբարձութիւն մը սկսած է
 աշխատիլ քայց միանգամայն ստոյգ
 է որ յաջողելու եւ արդիւնաւորելու
 համար ստակ պէտք է : Ուստի ամեն
 ծնողաց անհրաժեշտ պարտքն է իրենց
 որդւոց դատախարակութեան համար
 ամսական փոքրիկ դումարներ չ'ենա-
 յել, որպէս զի Հոգաբարձութիւնը ա-
 նարգել եւ առանց դժուարութեան
 շարունակել իւր գործը : Ուրախ եմք
 որ ինչպէս բոլոր աղղիս նոյնպէս Սէ-
 լամիյէի Թաղին մէջ դատախարակու-
 թեան կարևորութիւնը չճանչցող աղ-
 դայինք շատ քիչ մնացած են : Հե-
 տեւաբար քաջայոյս եմք որ Սէլամի-
 յէի մէջ այս անգամ աւելի ջերմ հա-
 մակրութիւն եւ աւելի ձեռնտուութիւն
 պիտի գտնէ նորընտիր մեծարդոյ Հո-
 գաբարձութիւնը՝ բոլոր պատուար-
 ժան Թաղեցւոց եւ մասնաւորապէս
 ծնողաց կողմանէ :

— Խասգիւղի Շահնազար — Նուպար
 վարժարանին մեծ ճեսուչ էֆէնտին
 մեզ կզրէ թէ՛ վարժարանին 14 ա-
 շակերտներէն ստորագրեալ նամակ

զրկուած չէ Մանդումէի, մինչդեռ նա
936 թուոյն մէջ իբրև անոնցմէ զբը-
կուած նամակ մը հրատարակած էր :
Եւ կհետևեցնէ թէ՛ անոր հեղինակը
վարպետորդի մը ըլլալու է, որով անոր
համար խմբագրութեան կողմանէ
տրուած պատասխանն ալ նոյն վար-
պետորդիին կվերաբերի, կըսէ :

— « Գերապատիւ Զալալեաց արքե-
պիսկոպոսը պատուաւոր ընդունելու
թիւն մը և սիրալիր հիւրընկալութիւն
մը յուսամք վայելեց մեր մէջ : Նորին
Սրբազնութիւնը իրեն այցելութիւն
սուտոյներու փոխադարձ այցելութեան
գնաց, և ամեն տեղ իր տաղանդին
ճոխ տեղեկութեան նոյնպէս, և իր բա-
նիքուն բնաւորութեան վրայ հաւաս-
տիներ թողուց :

« Երեքշաբթի Մանիսա գնաց ուր
իրեն խիստ շքեղ և պատուաւոր ըն-
դունելութիւն մ'եղած է. կառավա-
րութեան զինուորներ, եկեղեցական
դասը երգեցիկ աշակերտներով, և
ազգայնոց և օտարազգեաց խումբ-
բազմութիւն մը զանի դիմաւորելու
գացին : Տեղւոյն կառավարիչը մաս-
նաւոր ընտիր ձիեր զրկած էր Նորին
սրբազնութիւնը երկաթուղւոյն կա-
յարանէն գէպ ի քաղաք առաջնոր-
դելու համար :

« Գերապատիւ Սրբազննը իրեն ե-
ղած թախանձանաց զիջանելով շա-
բաթ մը ևս երկարածդեց վերադար-
ձը : »

— Ստեցի Նիկողայոս եպիսկոպոսի
խնդիրը այս շաբթու դարձեալ չվեր-
ջացաւ : — Չորեքշաբթի աւուր հա-
մար հրաւիրեալ եպիսկոպոսներէն մի-
այն 2—3ը ներկայ գտնուեր, և հե-
տևաբար անցործ դարձեր են :

Մաղթեմք որ երկինք խնդ մայ
մեր եկեղեցական հարց :

— Ամեն. Տեղապահ Հայրը, շո-
րեքշաբթի օրը ըստ վաղեմի սովորու-
թեան՝ ազգային Հիւանդանոց եր-
թալով, հետևեալ օրը՝ որ էր սօն
Համբարձման՝ հանդիսաւոր Պատա-
րագ մատոց յիշեալ պատասխարանին
մատրան մէջ : Ամեն կարգի ազգային
ներէ բազմաթիւ անձինք այս առ թիւ
այցելութեան գացեր են, և մեծար-
գոյ Հողարարձութեան կողմանէ ար-
ժանաւոր ընդունելութիւն եղեր է :

— Ստեղծ յառաջ խմայած և դի-
զութեամբ հրատարակած էինք թէ՛
Աղեկսանդրիոյ մէջ ազգային պաշտօն
վարող ազգային մը Յակոբեան եղբարդ
կողմանէ կենդուի կամ յարձակում կը
կկրէ, վրան կասկած ըլլալով թէ՛ Ա-
ղեկսանդրիոյն ազգային խնդրոց վը-
րայ տեղեկութիւն կհաղորդէ փունջի-
կյուսայինք թէ այսչափով կազատի
մեր յիշեալ ազգայինն, բայց զարմա-
նօք և ցաւով կատուգեմք որ Յակո-
բեանք զանի պաշտօնէն ձգեր են ու-
րիշ պատճառանօք :

Այս գէպքին վրայ մեր ընելիք
դիտողութիւնները յաջորդ թերթին
թողլով, այսօր կհրատարակենք հե-
տևեալ երկու գրութիւնները :

Պ. Յ. Փախազեան լուսարար եւ այլն .
Կսելով որ իբրև ազգային պաշտօն-
եաց քու ընթացից մէջ անհաւատարիմ
գտնուելով շատ ազգայիններու դժգոհու-
թեան տեղի տուած ես .

Մտուգելով որ անոնց գանդամները
իրաւացի են եւ պաշտօնիդ անվայել .

Ուստի, ըստ պահանջման ազգային
պատուոյդանպանութեան կիմացնեմ, որ
այսօրու ընէ քու պաշտօնդ կգազարի :

Պատուէր արուած է արժ. տէր Աբրահամ քահանային, որ պահպանութեանը տակ եղած ամեն ինչ ամբողջապէս իրեն յանձնած ժամանակը ընդունի. ըզկիսի որոյ եկեղեցիէն դուրս բնակութիւն գտնել կարտաւորիս ըստ ազգային սովորութեան:

Աղեկասնորիս 18/30 մայիս 1869

Առժմ. փոխ—Հոգաբարձս թ. Յակովբեան

Մեծապատիւ Տէր

Մինչդեռ մօտ երկու տարի Ձեր հայրական պաշտպանութիւնը վայելելով պապային բարեգուշակ քաղցր յուսոյ ազնկալութեամբ կ'մխիթարուէի, յանկարծ ակնկալութիւնս վշտառիթ արտմութեան փոխուեցաւ, ընդունելով Ձեր մայիս 18/30 թիւ գրութիւնը որուն մէջ պաշտօնիս դարձած ըլլալը իմացայ, (որուն թէեւ ես ալ մտադիր, բայց վիճակիս անկարողութիւնը կշռելով Ձեր օժանդակութեանը ակն ունէի քաղցր յուսով). ուստի եւ անմիջապէս Ձեր հրամանին համեմատ ինձ յանձնուած աւանդները ամբողջ հետեւեալ օրը արժ. տէր Աբրահամ հօր յանձնեցի:

Բայց չեմ կրնար սրտիս ցաւը բացատրել չէ թէ պաշտօնէս հրաժարելուս, այլ նոյն գրութեան մէջ «անհասարկ է անվախ» ամականներով պատուոյս դէմ եղած յանիրաւի նախատանաց համար, որ պատիւ բառին նշանակութիւնը գիտցող մէկու մը համար բարոյական մահ կը համարուի. արդէն նիւթական օգուտս յայտնի է, հարկաւ ուրիշ նպատակ մը ունէի, այն է բարոյականը, անկէ ալ գրեկութիւս ետքը հետեւութիւնը դուք կըրնաք կշռել: Յանիրաւի ըսելով Ձեզ զըրպարած չեմ ըլլար, քաւ ի բաց, այլ նոյն իսկ Ձեզ անդեկութիւն-տուսողներուն դէմ կրողոքեմ, և աւելի կիսափառքէի գոնէ անոցմէ մէկուն հետ երես առ երես խօսել ալ կամ զիս առանձին հարցուիորձ

ընելով տեղեկանայիք, այն ատեն ես ալ յանցաւոր ըլլալս ճանչնալով փոխարէն պատիժը անձամբ կգործադրէի: Ուստի առանց երկու կողմէն մտիկ ընելու միայն (անտեղի) կասկածի մը պատճառաւ եւ ունանց խօսքին հաւատ ընծայելով այսպիսի հարուած մը տուիք ինձ, հարուած մը որ Ձեր հուժկու զօրութեան եւ իմ ամենատկար վիճակիս բարդատմամբ, զարնելուն պէս ցիր ու ցան ըրաւ. արդեօք կրնամ հաւտալ որ դուք Ձեր այս գործէն գո՞ն եղած ըլլաք, չեմ յուսար. վասն զի հաւաստի եմ որ երկու տարուան չինել սկսած չէքքի մը, մէկ վայրկեան մէջ հիմն ի վեր ի վայր տապալել եւ փոշին օդին մէջ անբեւեոյթ ըլլալը չէք ուզեր եւ հաճութիւնս ալ չէք տար. ուստի Ձեզի ձանձրութիւն չի պատճառելու համար կվերջացնեմ գրութիւնս միաբերնիդ ձգելով Ձեր կատարելու պարտաւոր եղած մարդասիրական պարտաւորութիւննիդ, եւ կյանձնեմ Ձեր արդարադատ վեհանձնութեան:

Յ. Մ. Գ. Փափազեան

ԽՍՈՆ ԼՈՒՐԵՐ

Եգիպտոսի բարձր. խրատիվին Եւրոպայի ճամբորդութեան վրայ եղած լուրերը ծանր կերպարանք կառնեն հետզհետէ: Մայրաքաղաքիս Լաթիւրքի գաղղիական լրագիրը ուրիշ լրագրէ մը առնելով հետեւեալ տողերը հրատարակած է:

«Կհաւատան թէ Եգիպտոսի արշտաքին գործոց պաշտօնեայ Նուպար փաշան Աւստրիոյ կառավարութեան հետ ոչ թէ միայն Սուէլի ջրանցքին չէզոքութեան նկատմամբ խօսեր է փոխանորդաբար, այլ և նաւարկութեան և վաճառականութեան համար

դաշնագրութիւն մը հաստատելու մի-
տու մներ ցուցեր է » :

—Վսեմ, Տալու թ փաշան փարիզ
հասեր է : Կրտսի թէ Նորին վսեմու-
թիւնը իրականի երկամեակեաց գոր-
ծէն զատ նոր փոխառութիւն մը ը-
ներու պիտի դրազի :

—Կիմանանք թէ արտաքին գոր-
ծոց պաշտօնէին խորհրդականը եր-
կու օրէ ի վեր անհանգիստ վիճակի
մէջ ըլլալով Պէտլիք քանիքէի ամարա-
նայէն դուրս չէ ելեր :

—Չորեքշաբթի օր զօրապետ Էօ-
մէք փաշան Չէքմէճէ իր ազարակին
մէջ կոչուեալ մ'ըրեր ղինուորական գոր-
ծոց ու թնդանօթարանի վսեմ. պաշ-
տօնէից և ուրիշ շատ մը բարձրաստի-
ճան պաշտօնակալաց :

—Երեքշաբթի երեկոյ շէյխ Շա-
միլ էֆէնտին՝ Սթէնիա ներքին գոր-
ծոց պաշտօնէին հետ ճաշեր է :

—Մայրաքաղաքիս Լէվրնթ շէ-
րըւս քաղաքոյն ըսածին նայելով Բ-
Դուռը բողոքեր է շրանցքին բացման
հանգիսին համար խրատիլը իր անուամբ
և ոչ յանուս օգոստ. Սուլթանին հրա-
ւեր ընելուն դէմ :

—Պէրլինէն եկած հեռագիր մը
կիմայնէ թէ Երկաթոսի բարձր. խը-
տիլը անկէց ճամբայ ելեր է Փարիզ
երթալու համար :

Փարիզէն եկած լուրերը գոհա-
ցուցիչ չեն երեկը : Նորանոր ժողո-
վրդական գումարումներ եղեր են :
Մարտէյէզ երգը երգուելով չփոթ
ազգալիներ կլտուի : Սրճարանները և
խանութները կբացուին : Շատ հեծե-
լազօրներ կեյլեն Պուլխարներուն վը-
րոյ կպարտին, և թմրուկ զարնելով

խուռն բազմութիւնը կցրուեն. նոյն
միջոցին խաղաղութիւն մը կտիրէ :
Բայց երկրորդ օրը սարձեալ յուզ-
մունք պատահեր է և Պէլլըվիլ ըսուած
տեղը Մարտէյէզ երգը երգուեր է և
Թամբլը թաղին մէջ կարմիր դրօշակ
պարզուելով « կեցցէ հասարակապե-
տութիւն » նշուացեր են : Գէօշկ մը կը
րակի արուեր է և շատ մը յիմառուեա-
ներ վիրաւորուեր են : Յաջորդաբար
երրորդ օրը Պէլլըվիլ և Մօնթմաութ-
ուը Պուլլըվարին վրայ ալմկալից տե-
սարաններ պատահեր են : Երկու ու-
րիշ քէօշկ և գրասենեակ մը կողոյ-
տուեր են : Խուռն բազմութիւնը Մար-
տէյէզ երգը երգեր են : Ս. յս միջոցին
նստիկանութեան վերադասչին հրա-
մանաւ մէկ քանի քաղաքայ խաբաղի-
ներ բռնուեր են :

Դարձեալ փարիզէն կգրեն թէ ան-
թիւ բազմութիւն մը ժողովուեր է սու-
վարներուն վրայ և 120 հոգի բան-
տարկուեր են :

Նոյնպէս Պէլլըվիլ ըսուած տեղե-
ալ յուզմունք պատահեր է : Փարիզ
պահապան ղինուորք Մարտէյէզ եր-
գը երգելու համար եղած բոլոր գու-
մարումները ցրուեր են : Նանթ բուռն
տեղը յուզմունքը աւելի ծանր կը
պարանք աուեր է : Երեկուան դէմ շու-
ղինազործներու խանութներ կողոյ-
տուեր են : Հրացաններ պարպուելով
մէկ քանի հոգի վիրաւորուեր են :

Օրագրոյս չորեքշաբթի առուր թի-
ւը « հինգշաբթի » ըսուած էր սխա-
մամբ :

ՏՆՕՐԻՆ ԵՒ ՏԵՒ
Հ. Ս. Ա.Լ.Ա.Ճ.Ա.Յ.Ե
ՏԿԱԳՐՈՒԹԻՒՆ Ո. Յ. ՔԻՐՔԵՆԵՆ